34. ՄԵՌԵԼԻՆ ԲԱՆ ՏԱՆՈՂ ՄԱՐԴ

Կէղնի, չէղնի մարդ մի կէղնի։ Էդ մարդ շատ աղքատ կէղնի։

Կըսե.—Ի՛մալ էնիմ օր ընծիկ ապրուստ մի ձեռք բերիմ։

Կելնի կէրթա խարիբութեն։ Ուր հին շորեր ճամբու պաշար կէնե բողչեմի, կզարկի հ՚անթի տակ ու կէրթ՚ա։

Կէրթա քաղաք մի, կէրթա տուն մի կէղնի մսաֆըր, կպառկի քնի, կելնի լուսուն օր էրթա։ Էդ տուն լե մեռել մի կէղնի, հինգ տասավուր մեռուկ։

Օր կելնի կէրթա, ուր բողչեն կկապե, էդ տան կնիկ կտեսնի, կըսե.—Էդ ի՞նչ բողչա է, էդ ի՞նչ շոր է։

Մարդն կըսե.—Վուլլահի, քենիմ՚ ամիս կէնե իմ ախպեր մեռեր է, հըմկա ջուհապ է էրի, թը ընծիկ փարի, շորի պակասութեն կա, կտանիմ իմ ախպոր։

Էդ կնիկ, էդ օր կլսե.— Ախպեր ջան, համին-համին կէրթաս, քենիմ օր կէնե իմ տեգր մեռեր է, հըմկա էնտոր էլ պակասութեն կա, մինե մարդ չկա առնե՚ էրթա, առ իդա քանի օսկին ու էդա շորեր, տուր իմ տրգեր։

Մարդն կըսե.—Վո՛ւլլահի, չընկ տանե, աման ձեր խաթրի համար բան չըմ ըսի, կառնիմ, կէրթամ։

Էդ տուն լե թավթի զանկին կէղնի։ Կելնա կբերե տաս քսան օսկի կիտա էդ մարդուն. էրկու իրեք ձեռք լե շոր։ Մարդ կառնե, կուրախնա վրեն ու կդառնա հ՚իգա ուր տուն։

Էդ մարդն օր կելնի կէրթա, կնկա իրիկ գիգա տուն։

Կնիկ կըսե իրկան.—Մա՛րդ, հըմլա մարգմ՚ էկեր էր մըր տուն, կընցներ կէրթեր ուր ախպոր մոտ, խարճըլըղ կտաներ, ըսի՝ քենիմ՚

օսկի, մեկ էրկու ձեռք շոր լե իմ տըգեր տար, համին համին՝ դու կէրթաս, մզիկ մարթ չկա օր տանե, տվի, առավ դնաց։

Իրիկ կհերսոտի կնկա վրեն, կըսե.—Կնի՛կ, քու հեր շուն էղնի, խաբեր է քզիկ, առեր գացեր է։

Կըսե, ու կելնի ուր ձին կհեծնի կընկնի մարդու հ՝ետևեն։

Խոճամազ մարդ հմալ կէղնի, կդառնա կիշքե հ՝ետև, կտեսնի օր մարդ ձիով դիգա։ էդ ճամբու վրեն ջաղաց մի կէղնի, կէրթա կմտնի ջաղաց։

Ջաղցպնին կըսե.—Քու տուն ավիրի, ղըռ կաներ ես, հանդի հ՝ընկեր են ջաղցպներ կը մորթեն, հըմկա դիգան հ՝ուդա, հ՝ելի քանի շուտ է մտի ջաղցի շողտուն օր ազատիս։

Ջաղցպան լե կավտընա, կելնի կհանե զուր շորեր ու կմտնի ջաղցի շողտուն՝ կպաղտվի։

Մարդ լե կելնի, կհագնի ջաղցպնի շորեր, կկանի ջաղցի հ՝առեջ։

Ջիավոր գիգա, կիջի ջաղցի դուռ, կըսե.—Ջաղցպա՛ն, էդա հըմլա մարդըմ բողչեմ կար թեի տակ, էդա դիով չէկա՞վ հ՝ընցավ։

Մարդն կըսե.—Հա՜, վուլլահի էկավ, հ՝ընցավ, բըլե դու ընդոր չըս հասնի, ի՞նչ հեծեր ես ձիու վրեն կէնիս մեկ էրկու, իրեք, չորս, էնի կէներ մեկ էրկու ու կէրթեր, հ՝իջի ձիուց, ձին տուր ընծիկ, դիր օտկդ՝ էրե՛ մեկ էրկու, օր հասնիս, թե չէ էդա հըմլա, ձիու օտկերու հետ էնիս մեկ, էրկու, իրեք, չորս՝ չըս հասնի։

Մարդու խելք էլ կարճ կէղնի, կիջնի ձիուց, ձին կիտա էդ մարդուն օր հագեր է ջաղցպընի շորեր, կանի ջաղցի հ՝առեջ ու կընկի մարթու հ՝ետև կէրթա։

Մարդ է, կտեսնի օր խել մի տեխ էդ մարդ հ՝ուրնե հեռեցավ, կը հեծի ձին ու կընկի ճամբախ, դիգա խառ էդ մարդ կընցի, կըսե.—Աստված քու խելք առնե, էն մարդ օր կփնտռիս ես իմ, դը մանցի բարով, էլ դու չըս կռնա ընծի հասնիս։

Մարդ քոռ փոշման կքերե ուր գլուխ, կդառնա գիգա ուր տուն։

Կնիկ կհարցու, կըսե.—Մա՛րդ, իմալ էրիր, հասա՞ր, առա՞ր։

Մարդ կվերու կըսե.—Աստված ղքու տուն ավիրե, ուր լե քու հետ, իմալ օր քու գլուխ էրեր էր, բեթարն իմ գլուխ էրեց. ձին լե առավ գնաց։

Էնոնք կնստին ուրանց տուն։ Մարդ գիգա ուր քեֆով կուտե ու կխմե։